ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր

ՈՐՈՇՈՒՄ N 59 12 օգոստոսի 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ 900005200465 ՀԱՇՎԻՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2011թ. պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. մարտի 3-ի <<Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. N1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N202-Ն որոշմամբ և հիմք ընդունելով մարզպետարանի ենթակայության առևտրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության 2011թ. պետական բյուջե շահութաբաժինների վճարման չափերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության առաջարկությունները

որոշում եմ՝

1. Առևտրային կազմակերպություններին սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200465հաշվին վճարել շահութաբաժինները՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել մարզպետարանի ենթակայության առևտրային կազմակերպություններին մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը կատարել վճարումը և վճարման հանձնարարագրի 1օրինակը հանձնել մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին:
3. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝ հետևել շահութաբաժինների ժամանակին վճարմանը:

Ս. ԲԱԳՐԱՏՅԱՆ